

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ

3404 «ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՉԱՓՈՒՄՆԵՐ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՍՈՂՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԾՐԱԳՐԵՐ

	IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ			N	VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՔԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1	Վարվելակերպի հիմունքներ				ԿԱՔԻՆԵՏՆԵՐ
2	Ընտանեկան կյանքի նախապատրաստման հիմունքներ			1	Մասնագիտական տեխնոլոգիայի և նյութագիտության,
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամ.	Օրեր	2	Անհատական համակարգիչների,
1	Որակական անալիզի կատարման հմտություններ	5	2օր	3	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների
2	Կշռային անալիզի կատարման հմտություններ	5	2օր	4	Օտար լեզվի
3	Ծավալային անալիզի կատարման հմտություններ	5	2օր	5	Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկ.
4	Օրգանական նյութերի անալիզի կատարման հմտութ	6	4 օր	6	Աշխատանքի անվտանգության
5	Անվտանգ. և հակահրդ. կանոնները արտադր	6	2օր	7	Ֆիզիկայի
6	PH-մետրով անալիզի կատարման հմտություններ	6	4օր		
7	Ֆոտոէլեկտրոկոլորիմետրով անալիզի կատարման հմտ	6	4օր		
8	Քրոմատոգրաֆ սարքով անալիզի կատարման հմտ.	6	4օր		
9	Ստանդարտների ծանոթացում	6	3օր		
10	Սան հիգիենայի լաբորատորիա	6	3օր		ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
				1	Անալիտիկ քիմիայի
				2	Ֆիզ-քիմիայի
	ԸՆԴԱՄԵՆԸ		5 շաբ		
VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՍՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ					ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
Ավարտական աշխատանքի կատարում հունիսի 22-28-ը				1	Մարզադահլիճ
Ավարտական աշխատանքի պաշտպանում հունիսի 29- հունիսի 4-ը				2	Մարզահրապարակ

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ էլնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է հաստատության խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է հաստատությունը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված՝ նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, էլնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է հաստատությունը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ վնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Հաստատությունը, էլնելով՝ անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ „ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ,,

Մոդուլի դասիչը՝	ԸԱՀ-3-08-001
Մոդուլի տևողությունը	54 ժամ՝
Տեսական ուսուցում՝	24 ժամ
Գործնական պարապմունքներ՝	30 ժամ

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքեր աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլը յուրացնելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների.
2. դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ.
3. տիրապետի աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատի թիմում.
4. իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ.
5. դրսևորի քննադատական մտածողություն.
6. կառավարի սթրեսը և ժամանակը, առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները.
- բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները.
- գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV).
- դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է կազմում ինքնակենսագրությունը (CV) և մանրամասն բնավոր ներկայացնում իր կենսագրությունը:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՆԵՆԱԿՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտա-կան համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 6 ժամ
- Գործնական պարապմունք 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները.
- բ. ճիշտ է ներկայացնում գործերը նկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ.
- գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևորումներ.
- դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը սովել է հիմնավոր և ճիշտ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՆԵՆԱԿՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտա-կան համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Գործնական պարապմունք 3 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները.
- բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները.
- գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,
- դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին:
- ե. ճիշտ վերաբերմունք է դրևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ.
- զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈԴԱԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտա-կան համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը.
- բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները.
- գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կա-տարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտա-կան համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Գործնական պարապմունք 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Դրսևորել քննադատական մտածողություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը.
- բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ.
- գ իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտա-կան համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք 3 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները.

Այս մոդուլը յուրացնելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

- 1. սահմանի ուսումնառության անձնական նպատակները.**
- 2. բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարի պարզ թեմաների և տեքստերի մասին.**
- 3. նախաձեռնի, պահպանի, եզրափակի երկխոսություններ և քննարկումներ.**
- 4. մեկնաբանի սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.**
- 5. կատարի փաստաթղթավորում:**

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Սահմանել ուսումնառության անձնական նպատակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,
- բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,
- գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի սահմանել ուսումնառության անձնական նպատակները, պլանավորել և կիրառել ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, սահմանել ուսումնառության տարբեր եղանակները: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունք-ների միջոցով: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՌԵՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն	2 ժամ
Գործնական պարապմունքներ	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,
- բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,
- գ. տեղեկատվության առանձնացում/խմբավորումը կատարում է նպատակային,
- դ. հաղորդումը իրականացնում է հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հար-ցեր, ինչպես նաև կառաջադրվեն տեղեկատվության նպատակային խմբավորման աշխատանքներ բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունք-ների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՌԵՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է կիրառում՝ ակտիվ ունկնդրման՝ ժամանակ օգտագործվող հմտությունները, ինչպիսիք են՝
 - պարզաբանումներ ստանալու ձգտումը,
 - գրառումներ կատարելը,
 - ամփոփելը,
- բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,
- գ. ցուցաբերում է համոզելու կարողություն,

դ. կատարում է ճիշտ ամփոփում/եզրափակում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կառաջադրվեն իրավիճակներ, որտեղ կարող է պաշտպանել իր գաղափարները, կտրվեն խնդիրներ և երկխոսության ընթացքում դիմացինին համոզելու, իր խոսքն ամփոփելու, եզրակացություն անելու կարողությունները ստուգելու վերաբերյալ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունք-ների, առաջադրվող խնդիրների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՌԵՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 4 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,
- բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները.
- գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին առաջադրվում են սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ, մեկնաբանման, դրանց նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները ներկայացնելու կարողությունները ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունք-ների, սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

ՌԵՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 2 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կատարել փաստաթղթավորում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը՝ ըստ դրանց նշանակության,
- բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը,
- գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին տրամադրվում են տարբեր փաստաթղթեր՝ պահանջելով ըստ նշանակության խմբավորում և տեղեկատվությունների փաստաթղթավորում՝ ըստ տեսակների:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, տարբեր փաստաթղթերի օգտագործման, տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորման միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 6 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ „ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ,,

Մոդուլի դասիչը՝ SS 3 - 08 - 001

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսում է տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:

Մոդուլի տևողությունը՝ 54 ժամ

Տեսական ուսուցում 12 ժամ

Մուտքային մակարդակը՝ Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություն-ներ և կարողություններ չեն պահանջվում:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը՝

1. կհասկանա WORD ծրագրի նշանակությունը, կկարողանա բացատրել ծրագրի կառուցվածքը, կկարողանա օգտագործել New, Open, Close գործիքները, կկարողանա տեղաշարժել Տեքստային Ցուցիչը տեքստի մեջ, կկարողանա փակել WORD ծրագիրը,
2. կկարողանա կատարել տեքստային փաստաթղթի մուտքաօրման, խմբագրման, ֆորմատավորման տարրական գործողություններ,
3. կկարողանա պահպանել փաստաթուղթը,
4. կկարողանա կազմել և խմբագրել աղյուսակներ,
5. կկարողանա տեքստային փաստաթղթերում ներդնել գրաֆիկական օբյեկտներ, դրանց հետ կատարել տարրական խմբագրման գործողություններ,
6. կկարողանա տպագրել փաստաթուղթը:
7. կունենա ինտերնետում աշխատելու իմացություն

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՑՈՒՆՔ 1 WORD ԾՐԱԳԻՐ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ◆ իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը
- ◆ բացել նոր փաստաթուղթ
- ◆ ստեղծագործել օգնությամբ մուտքագրել
 - տեքստ (առանց ֆորմատավորման)
 - մեծատառ նշաններ (SHIFT կոճակի օգնությամբ)
 - սիմվոլներ (SHIFT կոճակի օգնությամբ)
 - թվանշաններ
- ◆ տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ
- ◆ կատարել տարրական ուղղումներ տեքստում
- ◆ փակել փաստաթուղթը
- ◆ բացել առկա փաստաթուղթը

- ◆ Իմանալ Zoom գործիքի հնարավորությունները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողը բացում է Word ծրագիրը և բանավոր ներկայացնում նրա կառուցվածքը:
2. Ուսանողին մուտքագրելու համար տրվում է 2-3 պարբերություններից բաղկացած, ամենաշատը 100 բառ, թվանշաններ և սիմվոլներ պարունակող տեքստ: Ուսանողը պետք է բացի նոր փաստաթուղթ, կատարի մուտքագրումը և պահպանի այն նախօրոք առաջարկված տեղում:
3. Ուսանողը բացում է իր հավաքած և պահպանած փաստաթուղթը ու ցուցադրում է ստեղծարարով Տեքստային Ցուցիչի տեղաշարժման հնարավորությունները:
4. Ուսանողը ցուցադրում է փաստաթղթի և Word ծրագրի փակման ձևերը:
Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, թույլ են տրված որոշ անճշտություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք:

ՌԻ-սուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2 . Տեքստերի տարրական ֆորմատավորում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐ

- ◆ պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար
- ◆ նշել բառերը և տեքստային հատվածները
- ◆ կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝
- ◆ կատարել տողերի հավասարեցում
- ◆ փոխել միջտողային տարածությունները
- ◆ փոխել տեքստի գույնը Font Color գործիքով
- ◆ փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով
- ◆ փոխել պարբերության խորությունները լուսանցքներից
- ◆ չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները
- ◆ վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները
- ◆ կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը
- ◆ Մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ

- փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ
- ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը
- ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ
- ◆ պատճենել տեքստը
- ◆ տեղափոխել տեքստը
- ◆ տողադարձել տեքստը
- ◆ համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին մուտքագրելու համար տրվում մոտ 50 բառ պարունակող հայերեն տեքստ:
2. Ուսանողին մուտքագրելու համար տրվում է մոտ 100 բառից կազմված՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն բառեր պարունակող, թվանշաններով և տարբեր սիմվոլներով տեքստ:
3. Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված փաստաթուղթը և ցուցադրում է մկնիկով և ստեղնաշարով տեքստը նշելու հնարավորությունները:
4. Ուսանողին տրվում է տարրական ֆորմատավորումներ պարունակող տպագրված փաստաթղթի օրինակ, որի վրա հասկանալի կերպով բացատրված են օգտագործված ֆորմատավորումները: Ուսանողը պետք է համակարգչի մեջ առկա նույն տեքստի չֆորմատավորված տարբերակի վրա կիրառի առաջարկված ֆորմատավորումները:
5. Ուսանողը պատրաստի փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է տեքստի պատճենահանման և տեղափոխման գործողությունները:
6. Ուսանողը կատարում է տողադարձումներ իրեն տրված պատրաստի փաստաթղթի օրինակի վրա:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե հիմնական մասերով առաջադրանք-ները ճիշտ են կատարվում, սակայն հնարավոր են աննշան, ոչ էական բացթողումներ, վրիպակներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ռեսուրսումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

ՌԵՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական աշխատանք 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Փաստաթղթի պահպանում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ◆ իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը
- ◆ պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը
- ◆ պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողը պետք է նկարագրի փաստաթղթերի պահպանման իմաստը, բերի տրամաբանական օրինակներ:
2. Ուսանողը մուտքագրում է մինչև 50 բառից բաղկացած տեքստ և պահպանում է այն՝ օգտագործելով Save As... պատուհանը:
3. Ուսանողին տրվում է պատրաստի մուտքագրված փաստաթուղթ, որի մեջ նա կատարում է փոփոխություններ: Հանձնարարվում է պահպանել կատարված ընթացիկ փոփոխությունները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում առաջադրանքները ամբողջությամբ և առանց էական սխալների կատարելու դեպքում:
ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ
Արդյունքի ուսուցումն իրականացվելու է գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքներն անհրաժեշտ է իրականացնել անհատական համակարգիչների կաբինետում՝ ունենալով տարբեր փաստաթղթերի նմուշներ, որոնք անհրաժեշտ է ստեղծել և պահպանել:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Գործնական աշխատանք 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Աղյուսակների պատրաստում և խմբագրում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐ

- ◆ պատրաստել աղյուսակ
- ◆ աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ,
- ◆ կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ
- ◆ ավելացնել նոր տողեր և նոր սյուններ աղյուսակի մեջ
- ◆ ջնջել աղյուսակի տողերը և սյունները
- ◆ փոխել սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ
- ◆ փոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ
- ◆ փոխել աղյուսակի գծերի գույնը
- ◆ գունավորել աղյուսակի տողը և սյունը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող փաստաթղթի տպագրված օրինակը: Ուսանողը պետք է պատրաստի այդ փաստաթուղթը և տպագրի: Գնահատումը կատարվում է բնօրինակի և տպագրված օրինակի համեմատության հիման վրա:

2. Ուսանողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող պատրաստի փաստաթուղթ: Նա այդ փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է պատկերների ֆորմատավորման գործողությունները:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքներն ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան թերություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների ձևով, անհատական համակարգիչների կաբինետում: Նպատակահարմար է ունենալ գրաֆիկական օբյեկտների նախապատրաստված ցանկ, որոնց հիման վրա աշխատելը հնարավորություն կտա ձեռք բերել արդյունքով սահմանված բոլոր կարողությունները:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Գործնական աշխատանք 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Փաստաթղթի տպագրում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ◆ Նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը
- ◆ իմանալ Print պատուհանի ֆունկցիաները
- ◆ տպագրել փաստաթուղթը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և տպագրել այն:

2. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և դրա օրինակի վրա բացատրել Print պատուհանի ֆունկցիաները:

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական հանձնարարությունը ուսանողը կատարում է անսխալ, իսկ պատուհանի ֆունկցիաները բացատրելիս կարող է նաև որոշ անճշտություններ թույլ տալ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը իրականացվելու է գործնական պարապմունքի միջոցով՝ անհատական համակարգիչների կաբինետում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

ԱՐԴՅՈՒՆՔ 7. Ինտերնետում աշխատելու իմացություն

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ◆ իմանալ Ինտերնետ հասկացության նշանակությունը
- ◆ ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը
- ◆ իմանալ Ինտերնետային Հասցե հասկացությունը
- ◆ իմանալ History հրամանի նշանակությունը
- ◆ իմանալ Favorites հրամանի նշանակությունը
- ◆ իմանալ Stop հրամանի նշանակությունը
- ◆ իմանալ Refresh հրամանի նշանակությունը
- ◆ իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը
- ◆ պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից
- ◆ պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից
- ◆ իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները
- ◆ ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա
- ◆ Ճիշտ օգտվել ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից,
- ◆ իմանալ էլեկտրոնային փոստի նշանակություն
- ◆ ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել Internet Explorer ծրագրի պատուհանի կառուցվածքը, նրա հիմնական կոճակների նշանակությունը:
 2. Ուսանողին հանձնարարվում է ցուցադրել History և Favorites հրամանները, բացատրել:
 3. Ուսանողին հանձնարարվում է բացատրել Stop և Refresh հրամանների նշանակությունը:
 4. Ուսանողին հանձնարարվում է բացատրել Back և Forward կոճակների նշանակությունը:
 5. Ուսանողին հանձնարարվում է բացել որևէ ինտերնետային էջ և պատճենել տեքստային և գրաֆիկական ինֆորմացիան այդ էջից:
 6. Ուսանողին հանձնարարվում է կատարել ինֆորմացիայի որոնում որևէ թեմայի շուրջ՝ օգտագործելով ինտերնետային փնտրող ծառայությունները:
 7. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված էլեկտրոնային փոստը: Ուսանողը պետք է ցուցադրի էլեկտրոնային նամակների ուղարկման և ստացման գործողությունները, էլեկտրոնային փոստով ֆայլերի ուղարկման և ստացման քայլերը:
- Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե կատարողական մակարդակով առաջադրանքը ճիշտ է կատարվում, սակայն թույլատրվում է տարբերակների ընտրության որոշ շեղումներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատա-կան համակարգիչների կաբինետում, որը ունի ինտերնետին միանալու հնարավորություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 6 ժամ
Գործնական աշխատանք 12 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ: ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը` ԷՎԳ 03-10-001

Մոդուլի նպատակը`

Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ էկոլոգիական գիտության դերի շրջակա միջավայրի պահպանման, էկոլոգիական իրավիճակի գնահատման և էկոլոգիական ճգնաժամի մասին, կարևորելով մթնոլորտի, ջրային պաշարների, հողերի, անտառների և կենսաբազմազանության պահպանության խնդիրները, առանձնացնելով Հայաստանի հանրապետության բնապահպանական պրոբլեմները:

Մուտքային պահանջներ`

Մոդուլի տևողությունը` 36 ժամ

Տեսական ուսուցում 36 ժամ

Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները`

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

1. ներկայացնի շրջակա միջավայրի պահպանությունը և նրա էկոլոգիական հիմունքները,
2. ներկայացնի մթնոլորտի դերը բնության մեջ և մարդու կյանքում, մթնոլորտի աղտոտման աղբյուրները և պահպանության միջոցառումները, օդային միջավայրի վիճակի վերահսկումը,
3. ներկայացնի ջրի դերը բնության մեջ և մարդու կյանքում, ջրային ռեսուրսները, ջրերի աղտոտման աղբյուրները, ջրային պաշարների արդյունավետ օգտագործումը և պահպանումը
4. ներկայացնի հողային ծածկույթի դերը, հողային ռեսուրսները, հողերի դեգրադացիայի պատճառները (աղակալում, էրոզիա, անապատացում, ճահճացում, աղտոտում), հողային պաշարների արդյունավետ օգտագործումը և պահպանումը,
5. ներկայացնի կենսաբազմազանության պահպանման խնդիրները:

Գնահատման կարգը`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնի շրջակա միջավայրի պահպանությունը և նրա էկոլոգիական հիմունքները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. Ճիշտ է բացատրում շրջակա միջավայրի պահպանությունը որպես բնական գիտություն, նրա խնդիրները և ասպեկտները,

բ. Ճիշտ է բացատրում բիոցենոզ, բիոգեոցենոզ, էկոհամակարգ հասկացությունները, կենսոլորտը որպես էկոհամակարգ, նրա բաղադրամասերը և առանձնահատկությունները,

գ. Ճիշտ է բացատրում շրջակա միջավայրի և էկոլոգիական գործոնների՝ աբիոտիկ, բիոտիկ և անթրոպոգեն գործոնների, ազդեցությունը և փոխներգործությունը, դրանց դերը բնության հավասարակշռության պահպանման գործում,

դ. Ճիշտ է բացատրում էկոլոգիական ճգնաժամ հասկացությունը և շրջակա միջավայրի գոյքալ աղտոտումը, միջազգային համագործակցության դերը շրջակա միջավայրի պահպանության գործում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր պատասխանի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ներկայացնել շրջակա միջավայրի պահպանության խնդիրները, բիոցենոզ, բիոգեոցենոզ, էկոհամակարգ հասկացությունները, կենսոլորտի բաղադրամասերը և առանձնահատկությունները, շրջակա միջավայրի և էկոլոգիական գործոնների դերը բնության հավասարակշռության պահպանման գործում:

Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը բոլոր հարցերին պատասխանել է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը իրականացվում է դասախոսությունների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ դասավանդման նյութ, ցուցադրական միջոցներ, մասնագիտական գրականություն: Ուսուցումը պետք է իրականացվի կաբինետային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ներկայացնի մթնոլորտի օդի դերը բնության մեջ և մարդու կյանքում, մթնոլորտի աղտոտման աղբյուրները և պահպանության միջոցառումները, օդային միջավայրի վիճակի վերահսկումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. Ճիշտ է բացատրում մթնոլորտի դերը բնության մեջ և մարդու կյանքում, մթնոլորտային օդի բաղադրությունը, օզոնային շերտը և նրա ճեղքվածքի առաջացման պատճառները,

բ. Ճիշտ է բացատրում մթնոլորտային օդի աղտոտման աղբյուրները՝ արդյունաբերական և կենցաղային արտանետումներ, ավտո և օդային տրանսպորտի այրման նյութեր, անասնապահական համակարգերի արտանետումներ, ատոմային պայթյունների և հրդեհների ռադիոակտիվ

արտանետումներ, գյուղատնտեսության մեջ օգտագործվող թունաքիմիկատների և այլն, մթնոլորտային օդի պահպանության միջոցառումները

գ. Ճիշտ է բացատրում մթնոլորտային օդի վիճակի վերահսկումը՝ ծծմբի, ազոտի օքսիդների, ցնդող օրգանական միացությունների, փոշու, կապարի, թույլատրելի սահմանները, օդի միջսահմանային աղտոտվածության վերահսկողությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատասխանել մթնոլորտի դերը, մթնոլորտային օդի բաղադրությունը, աղտոտման աղբյուրները, մթնոլորտային օդի պահպանության և վերահսկման միջոցառումները հարցերին :

Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը բոլոր հարցերին պատասխանել է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը իրականացվում է դասախոսությունների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ դասավանդման նյութ, ցուցադրական միջոցներ, մասնագիտական գրականություն: Ուսուցումը պետք է իրականացվի կաբինետային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ներկայացնի ջրի դերը բնության մեջ և մարդու կյանքում, ջրային ռեսուրսները, ջրերի աղտոտման աղբյուրները, ջրային պաշարների արդյունավետ օգտագործումը և պահպանումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. Ճիշտ է բացատրում ջրի դերը բնության մեջ և մարդու կյանքում, երկրագնդի ջրային ռեսուրսները,
- բ. Ճիշտ է բացատրում ջրերի աղտոտման աղբյուրները՝ արդյունաբերական և կենցաղային թափոններ, ջրային և օդային տրանսպորտ, գյուղատնտեսական արտադրություն և անասնապահական համակարգեր և այլն, ջրային ավազանի պահպանության միջոցառումները,
- գ. Ճիշտ է բացատրում ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը արդյունաբերության, գյուղատնտեսության մեջ և կենցաղում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատասխանել ջրի դերը բնության մեջ և մարդու կյանքում, երկրագնդի ջրային ռեսուրսները, աղտոտման աղբյուրները, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը հարցերին:

Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը բոլոր հարցերին պատասխանել է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը իրականացվում է դասախոսությունների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ դասավանդման նյութ, ցուցադրական միջոցներ, մասնագիտական գրականություն: Ուսուցումը պետք է իրականացվի կաբինետային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 6 ժամ

ԱՐԴՑՈՒՆՔ 4. Ներկայացնի հողային ծածկույթի դերը, հողային ռեսուրսները, հողերի դեգրադացիայի պատճառները (աղակալում, էրոզիա, անապատացում, ճահճացում, աղտոտում), հողային պաշարների արդյունավետ օգտագործումը և պահպանումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. Ճիշտ է բացատրում հողային ծածկույթի դերը երկրի կյանքում, բնահողի առաջացումը, բնահողի վրա մարդու տնտեսական գործունեության ներգործությունը, երկրագնդի հողային ռեսուրսները,
- բ. Ճիշտ է բացատրում հողերի էրոզիայի տիպերը՝ ջրային, քամու, կերհանդակների գերաբաժացում, ագրոտեխնիկական, անտառահատումներ, օգտակար հանածոների բաց եղանակով արդյունահանում և պայքարի միջոցառումները,
- գ. Ճիշտ է բացատրում հողերի աղտոտումը արդյունաբերական և կենցաղային թափոններով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր պատասխանի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ներկայացնել հողային ծածկույթի դերը երկրի կյանքում, բնահողի առաջացումը, հողային ռեսուրսները, հողերի էրոզիայի տիպերը, հողերի աղտոտումը աղբյուրները:

Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը հանձնարարականը կատարել է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը իրականացվում է դասախոսությունների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ դասավանդման նյութ, ցուցադրական միջոցներ, մասնագիտական գրականություն: Ուսուցումը պետք է իրականացվի կարփնետային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 8 ժամ

ԱՐԴՑՈՒՆՔ 5. Ներկայացնի կենսաբազմազանության պահպանման խնդիրները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. Ճիշտ է բացատրում կենսաբազմազանության՝ բուսական և կենդանական աշխարհի, պահպանման խնդիրները,
- բ. Ճիշտ է բացատրում անտառների դերը և պահպանումը,
- գ. Ճիշտ է հասկանում և գնահատում արգելոցներ, արգելավայրեր, ազգային պարկեր, դրանց խնդիրները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր պատասխանի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ներկայացնել բուսական և կենդանական աշխարհի պահպանման խնդիրները, անտառների դերը և պահպանումը, արգելոցներ, արգելավայրեր, ազգային պարկեր, դրանց խնդիրները:

Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը եթե ուսանողը հանձնարարականը կատարել է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԸ

Արդյունքի ուսուցանումը իրականացվում է դասախոսությունների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ դասավանդման նյութ, ցուցադրական միջոցներ, մասնագիտական գրականություն: Ուսուցումը պետք է իրականացվի կարփնետային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը՝ ԱՀԱ 03-10- 001

Մոդուլի նպատակը՝ Ուսանողին տալ գիտելիքներ քիմիական լաբորատորիայում աշխատելու անվտանգության կանոնների պահպանման, լաբորատորիայում առաջացող վնասակար և վտանգավոր գործոնների, քիմիական ռեակտիվների, լաբորատոր սարքերի, ամանեղենի հետ աշխատելու կարգի, թունավորվելու, հոսանքահարման, հրդեհի կանխման առաջն օգնության միջոցառումների վերաբերյալ:

Մոդուլի տևողությունը՝ 24 ժամ

Տեսական ուսուցում 24 ժամ

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. պահպանի ուսումնական լաբորատորիայում աշխատելու ընդհանուր կանոնները.
2. բնութագրի հիմնական վտանգավոր և վնասակար արտադրական գործոնները, որոնք ի հայտ են գալիս քիմիական լաբորիտարիայում աշխատելիս.
3. պահպանի անվտանգության պահանջները արտադրական սարքավորումների, քիմիական ամանեղենի, քիմիական ռեակտիվների և արտադրական պրոցեսի նկատմամբ.
4. պահպանի հրդեհային անվտանգության կանոնները, բնութագրի հրդեհի առաջացման պատճառները, կիրառի նախազգուշական միջոցներ՝ հրդեհավտանգ նյութերի, հեղուկների և գազերի հետ աշխատելիս.
5. կիրառի առաջին օգնության միջոցները աշխատանքի և հրդեհային անվտանգության կանոնների խախտման դեպքում:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Պահպանի ուսումնական լաբորատորիայում աշխատելու ընդհանուր կանոնները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. Ճիշտ է բացատրում տվյալ փորձի կատարման մեթոդիկայի նախնական հրահանգավորման ուսումնասիրման անհրաժեշտությունը.

բ. Ճիշտ է կիրառում լաբորատորիայում աշխատելու ընդհանուր կանոնները՝

- աշխատել արտահագուստով
- լինել ուշադիր, հանգիստ, առանց շտապելու
- աշխատավայրում պահպանել մաքրություն, կարգ ու կանոն
- երբեք չօգտագործել այնպիսի նյութեր, որոնք գտնվում են պիտակ չկրող անոթներում
- օվտագործել միայն մաքուր ամանեղեն և սարքեր, փորձերի համար վերցնել նվազագույն քանակությամբ նյութեր
- աշխատանքը ավարտելուց հետո լվանալ օգտագործած ամանեղենը, բոլոր ռեակտիվները, սարքերը դնել իրենց տեղերում, կարգի բերել աշխատանքային սեղանը
- փորձի կատարման բնութագիրը, փորձին վերաբերող դիտողությունները, արդյունքներն ու հետևությունները մանրամասն և խնամքով գրի առնել գործնական աշխատանքների տետրում

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեսթային առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է թեսթի միջոցով ընտրել ուսումնական լաբորատորիայում աշխատելու ընդհանուր կանոնները:

Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը բոլոր հարցերին պատասխանել է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը իրականացվում է դասախոսությունների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պլակատներ և տեղեկատու գրականություն: Ուսուցումը պետք է իրականացվի կաբինետային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բնութագրի հիմնական վտանգավոր և վնասակար արտադրական գործոնները, որոնք ի հայտ են գալիս քիմիական լաբորիտարիայում աշխատելիս.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. Ճիշտ է բնութագրում քիմիական լաբորատորիայում աշխատելիս առաջացող վտանգավոր և վնասակար գործոնները.
- բ. Ճիշտ է բացատրում վնասվածքների առաջացումը ապակյա ամանեղենի հետ աշխատելու դեպքում.
- գ. Ճիշտ է բացատրում այրվածքների առաջացումը տաք առարկաներից և քիմիական նյութերից.
- դ. Ճիշտ է բացատրում վտանգավոր գործոնները էլեկտրական սալիկների, էլեկտրական սարքերի հետ աշխատելիս.
- ե. Ճիշտ է բնութագրում վնասակար գործոնների առաջացումը թունավոր նյութերի հետ աշխատելիս.
- զ. Ճիշտ է բացատրում վտանգավոր և վնասակար գործոնների առաջացումը հրդեհավտանգ, պայթյունավտանգ նյութերի հետ աշխատելիս.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեսթային առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է թեսթի միջոցով ընտրել քիմիական լաբորատորիայում աշխատելու ժամանակ առաջացող վտանգավոր և վնասակար արտադրական գործոնները:

Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը բոլոր հարցերին պատասխանել է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը իրականացվում է դասախոսությունների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պլակատներ և տեղեկատու գրականություն: Ուսուցումը պետք է իրականացվի կաբինետային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Պահպանի անվտանգության պահանջները արտադրական սարքավորումների, քիմիական ամանեղենի, քիմիական ռեակտիվների և արտադրական պրոցեսի նկատմամբ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է պահպանում անվտանգության կանոնները քիմիական ամանեղենի հետ աշխատելիս, ամանեղենի լվացման աշխատանքներ կատարելիս.
- բ. ճիշտ է պահպանում քիմիական լաբորատորիայում օգտագործվող սարքերի և սարքավորումների հետ աշխատելու անվտանգության կանոնները.
- գ. ճիշտ է պահպանում ուժեղ թթուների և հիմքերի հետ աշխատելու անվտանգության կանոնները, կիրառում ծծմբական թթվի նոսրացման կարգը.
- դ. ճիշտ է ձեռնարկում միջոցներ մաշկը խիտ թթվով, հիմքով այրվելու դեպքում.
- ե. ճիշտ է պահպանում թունավոր նյութերի հետ աշխատելու անվտանգության կանոնները, ինչպիսիք են սնդիկի, արսենի միացությունները, սպիտակ ֆոսֆորը, քլորը, բրոմը, ծծմբաջրածինը, ածխածնի մոնօքսիդը և այլն.
- զ. ճիշտ է կիրառում թունավոր նյութերի հետ աշխատելիս աշխատանքը քարշիչ պահարանում կատարելու անհրաժեշտությունը, ինչպես նաև քիմիական եղանակով թունավոր նյութեր պարունակող մնացորդների վնասագերծման անհրաժեշտությունը.
- է. ճիշտ է պահպանում շուտ բռնկվող և այրվող գազերի, հեղուկների հետ աշխատելու անվտանգության կանոնները, ինչպիսիք են ջրածինը, թթվածինը, ացետիլենը, մեթանը, սպիրտը, ացետոնը, բենզինը, քսիլոլը, եթերը և այլն.
- ը. ճիշտ է պահպանում ինքնաբոցավառվող նյութերով (սպիտակ ֆոսֆոր, ալկալիական մետաղներ և այլն) աշխատելիս անվտանգության կանոնները.
- թ. ճիշտ է կիրառում մետաղական նատրիումով կամ կալիումով աշխատելիս ջրից զգուշանալու անհրաժեշտությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեսթային առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է թեսթի միջոցով ընտրել արտադրական սարքավորումների, քիմիական ամանեղենի, քիմիական ռեակտիվների, թունավոր և հեշտ բռնկվող նյութերի, ուժեղ թթուների և հիմքերի հետ աշխատելու անվտանգության պահանջները:

Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը բոլոր հարցերին պատասխանել է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՇՏՈՒՄՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը իրականացվում է դասախոսությունների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պլակատներ և տեղեկատու գրականություն: Ուսուցումը պետք է իրականացվի կաբինետային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Պահպանի հրդեհային անվտանգության կանոնները, բնութագրի հրդեհի աջառացման պատճառները, կիրառի նախազգուշական միջոցներ՝ հրդեհավտանգ նյութերի, հեղուկների և գազերի հետ աշխատելիս:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բնութագրում հրդեհի առաջացման պատճառները տաք առարկաներից, քիմիական նյութերից, էլեկտրական սարքավորումների անսարքություններից.
- բ. ճիշտ է կիրառում հրդեհավտանգ հեղուկների և գազերի հետ աշխատելու անվտանգության կանոնները.
- գ. ճիշտ է կիրառում սարքին սարքաբավորումներով աշխատելու խիստ պահանջը: Անսարքության դեպքում մասնագետին դիմելու անհրաժեշտությունը.
- դ. ճիշտ է կատարում տաքացման, գոլորշացման աշխատանքները միայն փակ էլեկտրական սալիկների վրա կամ ջրային բաղնիքներում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեսթային առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է թեսթի միջոցով ընտրել հրդեհային անվտանգության կանոնները, հրդեհավտանգ հեղուկների և գազերի հետ աշխատելիս նախազգուշական միջոցները:

Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը բոլոր հարցերին պատասխանել է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՇՏՈՒՄՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը իրականացվում է դասախոսությունների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պլակատներ և տեղեկատու գրականություն: Ուսուցումը պետք է իրականացվի կաբինետային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կիրառի առաջին օգնության միջոցները աշխատանքի և հրդեհային անվտանգության կանոնների խախտման դեպքում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է բնութագրում անվտանգության խախտումների դեպքում առաջին բուժ օգնության միջոցները.

բ. ճիշտ է կիրառում բոցից կամ տաք առարկաներից այրվածքներ ստանալու դեպքում մաշկը խմելու սողայի կամ կալիում պլերմանգանատի լուծույթով լվանալը, վազելին քսելու և վիրակապելու կարգը.

գ. ճիշտ է կիրառում թունավոր գազերով թունավորվելու դեպքում տուժածին թարմ օդ դուս բերելու, արհեստական շնչառություն տալու և բժշկին դիմելու անհրաժեշտությունը.

դ. ճիշտ է կիրառում թունավոր նյութերով թունավորվելու դեպքում առաջին օգնության կանոնները՝

- ամիակից, ծծմբակն թթվից, քացախաթթվից թունավորվելու դեպքում նախ խմել մեծ քանակությամբ ջուր, ապա կուլ տալ կավիճ, մոխիր, ձեթ
- բրոմից թունավորվելու դեպքում ներշնչել ամոնիակ, խմել կաթ, դուրս գալ մաքուր օդ
- ալկալիով թունավորվելու դեպքում խմել նոսրացված քացախ, կաթ կամ լիմոնի հյութ
- ամիակով թունավորվելու դեպքում ներշնչել տաք ջրային գոլորշիներ, դիմել բժշկի

ե. ճիշտ է կիրառում միջոցառումներ հրդեհի բռնկման դեպքում, այրվող մակերեսը թաց թաղիքով, ավազով ծածկելու, կրակմարիչով հանգցնելու անհրաժեշտությունը..

զ. ճիշտ է կիրառում հոսանքահարման դեպքում ընդհանուր անջատիչից հոսանքի անջատման, տուժածին արհեստական շնչառություն տալու և բժշկին դիմելու անհրաժեշտությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեսթային առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է թեսթի միջոցով ընտրել աշխատանքի և հրդեհային անվտանգության կանոնների խախտման դեպքում կիրառվող առաջին օգնության միջոցները:

Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը բոլոր հարցերին պատասխանել է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆ

Արդյունքի ուսուցանումը իրականացվում է դասախոսությունների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պլակատներ և տեղեկատու գրականություն: Ուսուցումը պետք է իրականացվի կաբինետային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 5 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԼԱԲՈՐԱՏՈՐ ՍԱՐՔԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ԼՍՍ 03-10-001

Մոդուլի նպատակը` Ուսանողին տալ գիտելիքներ քիմիական լաբորատորիայի նշանակության, բնույթի, կառուցվածքի, կահավորման, տարբեր նշանակության լաբորատոր սարքերի, սարքավորումների, լաբորատոր ամանեղենի տեսակների, կանոնների վերաբերյալ:

Մոդուլի տևողությունը` 18 ժամ

Տեսական ուսուցում 18 ժամ

Մուտքային պահանջները`

Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն **Ուսումնառության արդյունքները`**

Այս մոդուլն յուրացնելուց հետո սովորողը պետք է`

1. բնութագրի քիմիական լաբորատորիայի նշանակությունը, կառուցվածքը, բնույթը, կահավորումը.
2. ներկայացնի քիմիական լաբորատորիայի սանիտարա-տեխնիկական սարքավորումները.
3. բնութագրի քիմիական լաբորատորիայի օդափոխության տեսակները, էլեկտրո- գազա անցումները.
4. ներկայացնի քիմիական լաբորատորիայում օգտագործվող քիմիական ամանեղենը, սարքերը, սարքավորումները, դասակարգի դրանց նշանակությունը.
5. ներկայացնի քիմիական լաբորատորիայում օգտագործվող կշեռքները, ամանեղենը, սարքերը, սարքավորումները, դրանց հետ աշխատելու կարգը:

Գնահատման կարգը`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Բնութագրի քիմիական լաբորատորիայի նշանակությունը, կառուցվածքը, բնույթը, կահավորումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է բնութագրում քիմիական լաբորատորիայի նշանակությունը.
- բ. ճիշտ է ներկայացնում քիմիական լաբորատորիայի բնույթը` օրգանական նյութերի սինթեզի, անալիտիկ, ֆիզիկո-քիմիական անալիզների կատարման համար.
զ. ճիշտ է կատարում վառելանյութի ջերմունակության որոշումը՝ էլեմենտար անալիզի արդյունքների հիման վրա համապատասխան ձևով և կոլորիմետրիկ մեթոդով.

է. ճիշտ է գրանցում անալիզի արդյունքները, կատարում մաթեմատիկական հաշվարկումները.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել վառելանյութի անալիզ՝ արտաքին և անալիտիկ խոնավության, ջերմունակության, մոխրի և ծծմբի պարունակության որոշումներ:

Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը գործնական աշխատանքը կատարել է ամբողջությամբ և անսխալ: Թույլատրվում է ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը իրականացվում է գործնական ուսուցման միջոցով, քիմիական լաբորատորիայում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական աշխատանք 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ներկայացնի օրգանական նյութերի արտադրությունում կատարվող անալիզները, դրանց մեթոդները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է ներկայացնում օրգանական միացությունների որակի գնահատման մեթոդները (ֆիզիկական հաստատումների որոշումը, էլեմենտար ֆունկցիոնալ անալիզներ).

բ. ճիշտ է ներկայացնում օրյանական նյութերի ֆիզիկական հատկությունների որոշման մեթոդները.

գ. ճիշտ է կատարում օրգանական նյութերի հալման, բյուրեղացման, եռման ջերմաստիճանների որոշումը.

դ. Ճիշտ է որոշում խոնավության պարունակությունը օրգանական միացություններում Ֆիշերի մեթոդով

ե. Ճիշտ է պահպանում անալիզների կատարման համար օգտագործվող սարքերի հետ աշխատելու անվտանգության կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել օրգանական նյութերի հալման, եռման, բյուրեղացման ջերմաստիճանների, խոնավության պարունակության որոշումներ, պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները:

Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը գործնական աշխատանքը կատարել է ամբողջությամբ և անսխալ: Թույլատրվում է ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը իրականացվում է գործնական ուսուցման միջոցով, քիմիական լաբորատորիայում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 1 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱԾԽԱԶՐԵՐ, ԴՐԱՆՑ ՈՐՈՇՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը՝ ԼՀՉԱ 03-10-22

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ստեղծել գիտելիքների բազա ածխաջրերի անալիզի մեթոդների վերաբերյալ, որոնք վերաբերվում են ածխաջրերի կառուցվածքի և հատկությունների ուսումնասիրմանը, ածխաջրերի դասակարգմանը՝ մոնո-, օլիգո- և պոլիսախարիդների, ներառելով բնորոշ գունային ռեակցիաներ:

Մոդուլի տևողությունը՝ 24 ժամ

Տեսական ուսուցում 6 ժամ

Գործնական աշխատանք 18 ժամ

Մուտքային պահանջներ՝

Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն

Ուսումնասիրության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. Ներկայացնի և տիրապետի ածխաջրերի որոշման մեթոդներին, որոնք դասակարգվում են՝ պոլյարիմետրիկ, քիմիական, կոլորիմետրիկ, ֆերմենտային.
2. Որոշի պոլյարիմետրիկ մեթոդով սախարոզի, օսլայի քանակները.

3. Որոշի քիմիական մեթոդով մոնո- և օլիգոսախարիդներ, ինչպես նաև մալթոզի քանակը քարեջրի քաղցուի մեջ, տարբեր սպիրտային խմիչքներում շաքարի ընդհանուր քանակը ըստ գլյուկոզի:

4. Տիրապետի շաքարների (գլյուկոզ, ֆրուկտոզ) որոշման կոլորիմետրիկ մեթոդներին:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնի և տիրապետի ածխաջրերի որոշման մեթոդներին, որոնք դասակարգվում են՝ պոլյարիմետրիկ, քիմիական, կոլորիմետրիկ, ֆերմենտային:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա.Ճիշտ է բացատրում պոլյարիմետրիկ մեթոդի էությունը, որը հիմնված է ածխաջրերի հատկության վրա պտտելու պոլյարիզացիոն լույսի պոլյարիզացված (բևեռացված) հարթությունը համապատասխան սարքերով:

բ.Ճիշտ է բացատրում քիմիական մեթոդների էությունը, որոնք հիմնված են մոնոսախարիդների ալդեհիդային կամ կետոնային խմբի օքսիդացմանը ծանր մետաղներով վերականգնելով մետաղը. ճիշտ է բացատրում լաբորատոր պրակտիկայում լայնորեն կիրառվող մեթոդները, հիմնված հիմնային միջավայրում մետաղների, ինչպես նաև յոդի վերականգնման վրա:

գ.Ճիշտ է բացատրում կոլորիմետրիկ մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս համապատասխան սարքով չափել լուծույթի օպտիկական խտությունը, որը ստացվում է շաքարի և ռեակտիվի հանապատասխան գունավորումից (անտրոն, ռեզորցին և այլն), որի դեպքում գույնը ուղիղ համեմատական է շաքարի քանակությանը:

դ.պատկերացում ունի ֆերմենտային մեթոդների մասին, կարող է համեմատել շաքարների որոշման մեթոդները իրար հետ և կարող է հիմնավորել, թե արտադրությունում որ մեթոդն է հարմար կիրառել:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը նահատվելու է հարց ու պատասխանի միջոցով, ինչպես նաև գործնական առաջադրանքը կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է ծանոթ լինի շաքարների որոշման մեթոդներին, ճիշտ բացատրի այդ մեթոդների էությունը: Ուսանողը պետք է ծանոթ լինի սարքերին, կարողանա չափումներ կատարել այդ սարքերով: Կարողանա պատրաստել տարբեր շաքարների լուծույթներ, ինչպես նաև Մելիվանովի (ռեզորցինի) ռեակտիվը, Գայնեսի ռեակտիվը, անտրոնի ռեակտիվը և այլ անհարաժեշտ լուծույթներ: Ուսանողը պետք է կարողանա իր աշխատանքային տետրում ճիշտ ձևակերպել փորձի նպատակը, արդյունքները գրանցել աղյուսակով կամ գրաֆիկորեն: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ՝որոշակի ոչ էական բացթողումներով և անճշտություններով, ինչպես նաև կարողանա կատարել գործնական առաջադրանքներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական գիտելիքների ուսուցմամբ և գործնական պարապմունքներով, բացատրելով շաքարների որոշման տարբեր մեթոդները և դրանց էությունը,

հիմնավորելով դրանցից յուրաքանչյուրի առավելությունը և թերությունը, ծանոթացնելով օգտագործվող սարքերին՝ սախարիմետր, սպեկտրոֆոտոմետր, կոլորիմետր, որոնց առկայությունը կարևոր է, ինչպես նաև անհրաժեշտ ռեակտիվներին, ունենալով անհրաժեշտ քիմիական նյութերը: Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

ԱՐԴՑՈՒՆՔ 2. Որոշի պոլյարիմետրիկ մեթոդով սախարոզի, օսլայի քանակները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ծանոթ է պոլյարիմետր, սախարիմետր (արտադրությունում շատ կիրառվող Сахариметр СУ -3) սարքերին.

բ. կարող է որոշել սախարոզի քանակը տարբեր լուծույթներում սախարիմետր սարքով.

գ. կարող է որոշել օսլայի քանակը տարբեր լուծույթներում (կարտոֆիլի պալարներում, հացազգիներում՝ ցորեն, գարի, եգիպտացորեն և այլն) սախարիմետր սարքով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքը կատարելու հիման վրա: Ուսանողը պոլյարիմետր (սախարիմետր) սարքով պետք է կարողանա որոշել լուծույթներում գլյուկոզի, սախարոզի, օսլայի տարբեր քանակները (1-, 10%-լուծույթներ), ինչպես նաև բուսական տարբեր հումքից անջատել, պատրաստել և որոշել օսլայի և այլ շաքարների քանակներ: Ուսանողը պետք է կարողանա իր աշխատանքային տետրում ճիշտ ձևակերպել փորձի արդյունքները և ներկայացնել: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը կարողանա կատարել գործնական առաջադրանքները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսանողին պետք է սովորեցնել չափումներ կատարել պոլյարիմետր, սախարիմետր սարքով: Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում առկա սարքի դեպքում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Գործնական աշխատանք 4 ժամ

ԱՐԴՑՈՒՆՔ 3. Որոշի քիմիական մեթոդով մոնո-և օլիգոսախարիդներ, ինչպես նաև մալթոզի քանակը

գարեջրի քաղցուի մեջ, տարբեր սպիրտային խմիչքներում շաքարի ընդհանուր քանակը ըստ գլյուկոզի:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. կարող է որոշել մոնո-և օլիգոսախարիդների քանակը տարբեր լուծույթներում քիմիական մեթոդներով հիմնված պղնձի օքսիդիով շաքարների օքսիդացման վրա (Բերտրանի մեթոդ, Մյուլերի մեթոդ, Լեյնի և Էյնոնի մեթոդ).

բ. կարող է որոշել օլիգոսախարիդ՝ մալթոզի քանակը տարբեր լուծույթներում Բերտրանի մեթոդ.

գ.կարող է որոշել տարբեր սպիրտային խմիչքներում շաքարի ընդհանուր քանակը ըստ գյուկոզի նշված մեթոդներով.

դ.կարող է տիրապետել շաքարի որոշման էքսպրես մեթոդին, հիմնված պղնձի սուլֆատի և նատրիումի կարբոնատի ռեակցիայի վրա, ցանկացած կենսաբանական հեղուկներում, տարբեր լուծույթներում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքները կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է կարողանա որոշել ստանդարտ լուծույթում և փորձանմուշի լուծույթում գյուկոզի տարբեր քանակները քիմիական նշված որևէ մեթոդով: Ուսանողը պետք է կարողանա բացատրել Բերտրանի, Մյուլերի, Լեյնի և Էյնոնի մեթոդների հիմքում ընկած ռեակցիաները: Ուսանողը պետք է կարողանա պատրաստել գլուկոզի, սախարոզի, օսլայի և այլ շաքարների 1-, 10%-լուծույթներ, պատրաստել Ֆելինգի լուծույթները (Ֆելինգ-I-ը, որը պղնձի սուլֆատի լուծույթ է և Ֆելինգ-II, որը KNa-տարտրատի հիմնային լուծույթն է): Ուսանողը պետք է կարողանա իր աշխատանքային տետրում ճիշտ ձևակերպել փորձի արդյունքները, գրանցել աղյուսակով և քանակական հաշվարկներ կատարել շաքարների որոշման: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ որոշակի ոչ էական բացթողումներով, կատարի գործնական առաջադրանքները և քիմիական նշված մեթոդներից մեկով կատարի շաքարի քանակական որոշում տարբեր լուծույթներում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական և գործնական գիտելիքների ուսուցմամբ, բացատրելով շաքարների որոշման քիմիական մեթոդները և դրանց էությունը, հիմնավորելով շաքարների օքսիդացումը հիմնային միջավայրում քիմիական մեթոդների դեպքում: Ուսանողին պետք է ծանոթացնել անհրաժեշտ ռեակտիվներին, դրանց պատրաստմանը: Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական ուսուցում 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Տիրապետի շաքարների (գլուկոզ, ֆրուկտոզ) որոշման կոլորիմետրիկ մեթոդներին

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ծանոթ է Ֆոտոէլեկտրոկոլորիմետր սարքին և կարող է չափումներ կատարել.
- բ.կարող է որոշել մոնո-և օլիգոսախարիդների քանակը տարբեր լուծույթներում անտրոնի մեթոդով (ալդոզների որոշման եղանակ).
- գ.կարող է որոշել ֆրուկտոզի քանակը տարբեր լուծույթներում ռեզորցինի մեթոդով (կետոզների որոշման եղանակ).
- դ.կարող է որոշել օսլայի և նրա հիդրոլիզի պրոդուկտները յոդի թեստի միջոցով կոլորիմետրիկ մեթոդով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքը կատարելու հիման վրա: Ուսանողը Ֆոտոէլեկտրոկոլորիմետր, սպեկտրոֆոտոմետր սարքերով պետք է կարողանա որոշել լուծույթում գլյուկոզի, ֆրուկտոզի տարբեր քանակները: Ուսանողը պետք է կարողանա կառուցել գլյուկոզի, ֆրուկտոզի ստուգիչ կորերը 10 – 100 միկրոգրամ/մլ չափաքանակների ստանդարտ լուծույթներով: Ուսանողը պետք է կարողանա պատրաստել օսլայի տարբեր լուծույթներ, որոշել յոդի թեստով: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ՝ որոշակի ոչ էական բացթողումներով, կատարի գործնական առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական և գործնական գիտելիքների ուսուցմամբ, բացատրելով շաքարների որոշման կոլորիմետրիկ մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս համապատասխան սարքերով (սպեկտրոֆոտոմետր, կոլորիմետր) չափել լուծույթի օսլտիկական խտությունը, որը ստացվում է շաքարի և ռեակտիվի հանապատասխան գունավորումից (անտրոն, ռեզորցին և այլն), որի դեպքում գույնը ուղիղ համեմատական է շաքարի քանակությանը: Անհրաժեշտ է ունենալ ամիլլազ ֆերմենտը և դրանով իրականացնել օսլայի հիդրոլիզ, որի արդյունքում ստացված պրոդուկտները (գլյուկոզ, մալթոզ, օլիգոշաքարներ) որոշել կոլորիմետրիկ մեթոդով: Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական ուսուցում 5 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄՊԻՏԱԿՈՒՑՆԵՐ, ԴՐԱՆՑ ՈՐՈՇՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը՝ ԼՀՉԱ 03-10-23

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ստեղծել գիտելիքների բազա սպիտակուցների անալիզի մեթոդների վերաբերյալ, որոնք վերաբերվում են պարզ և բարդ սպիտակուցների կառուցվածքի և հատկությունների ուսումնասիրմանը, անջատմանը, ներառելով բնորոշ գունային ռեակցիաներ սպիտակուցների և ամինաթթուների համար, ինչպես նաև բարդ սպիտակուցների՝ նուկլեո-, գլիկո-, ֆոսֆոպրոտեիդների կոմպոնենտներին բնորոշ ռեակցիաներ:

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ

Տեսական ուսուցում 6 ժամ

Գործնական ուսուցում 36 ժամ

Մուտքային պահանջներ՝

Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն **Ուսունաստության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. ներկայացնի և տիրապետի կենսաբանական օբյեկտներից բուսական և կենդանական սպիտակուցների անջատմանը՝ նստեցման և բաժանման մեթոդներին.
2. կարողանա տարբեր նմուշներում որոշել սպիտակուցային ազոտը, ոչ սպիտակուցային ազոտը և ընդհանուր ազոտը.
3. տիրապետի սպիտակուցների և ամինաթթուների անալիզի գունային ռեակցիաներին.
4. տիրապետի ամինաթթուների բաժանմանը և քանակական որոշմանը թղթի քրոմատոգրաֆիկ Մեթոդով.
5. տիրապետի բարդ սպիտակուցների՝ նուկլեո-, գլիկո-, ֆոսֆոպրոտեիդների որոշման եթոդներին:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնի և տիրապետի կենսաբանական օբյեկտներից բուսական և կենդանական սպիտակուցների անջատման նստեցման և բաժանման մեթոդներին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. Ճիշտ է բացատրում սպիտակուցների դառնալի և անդառնալի նստեցման ռեակցիաները տարբեր գործոնների ազդեցությամբ՝ տաքացմամբ, հանքային և օրգանական թթուների, հիմքերի, աղերի, օրգանական լուծիչների՝ սպիրտ, ացետոն և այլն ազդեցությամբ.

բ.կարող է պատրաստել սպիտակուցների լուծույթներ՝ ձվի սպիտակուցի, կաթի կազեինի, ժելատինի, թքի սպիտակուց՝ մուցինի, 1%-անոց լուծույթներ.

գ.փորձնականորեն կարող է նկարագրել և իրականացնել թթվային նստեցման, տաքացման եղանակով կաթի սպիտակուցի՝ կազեինի անջատումը.

դ. կարող է իրականացնել անօրգանական ֆոսֆորի որոշումը կաթի կազեինի մեջ,

ե.կարող է ձվի սպիտակուցից անջատել գլոբուլինները ալբումիններից, կիրառելով աղերով և տաքացմամբ նստեցման մեթոդները.

զ.կարող է չափել տարբեր սպիտակուցային լուծույթների մածուցիկությունը վիսկոզիմետրով, բացատրելով բնական և դենատուրացված (45°C տաքացված 40 րոպե) սպիտակուցների մածուցիկության տարբերությանը.

է. կարող է որոշել տարբեր սպիտակուցների իզոելեկտրիկ կետը, այսինքն միջավայրի PH-ը որի դեպքում սպիտակուցը նստում է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքները կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է կարողանա բացատրել սպիտակուցների դառնալի և անդառնալի նստեցման ռեակցիաները տարբեր գործոնների ազդեցությամբ՝ տաքացմամբ, հանքային և օրգանական թթուների, հիմքերի, աղերի, օրգանական լուծիչների՝ սպիրտ, ացետոն և այլն ազդեցությամբ: Ուսանողը պետք է կարողանա պատրաստել սպիտակուցների լուծույթներ՝ ձվի սպիտակուցի, կաթի կազեինի, ժելատինի, թթի սպիտակուց՝ մուցինի, 1%-անոց լուծույթներ, փորձնականորեն կարող է նկարագրել և իրականացնել թթվային նստեցման, տաքացման եղանակով կաթի սպիտակուցի՝ կազեինի անջատումը, ձվի սպիտակուցից անջատել գլոբուլինները ալբումիններից, կիրառելով աղերով և տաքացմամբ նստեցման մեթոդները: Ուսանողը պետք է կարողանա որոշել անօրգանական ֆոսֆորի կաթի կազեինի մեջ, ինչպես նաև տարբեր սպիտակուցների իզոլեկտրիկ կետը, այսինքն միջավայրի pH-ը որի դեպքում սպիտակուցը նստում է: կարող է չափել տարբեր սպիտակուցային լուծույթների մածուցիկությունը վիսկոզիմետրով, բացատրելով բնական և դեմատուրացված (45°C տաքացված 40 րոպե) սպիտակուցների մածուցիկության տարբերությունը: Ուսանողը իր աշխատանքային տեսքում պետք է ճիշտ ձևակերպի փորձի արդյունքները: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ՝ որոշակի, ոչ էական բացթողումներով, կատարի գործնական առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական և գործնական գիտելիքների ուսուցմամբ, ունենալ սպիտակուցային տարբեր լուծույթներ, թթուներ, հիմքեր, աղեր, օրգանական լուծիչներ: Անհրաժեշտ է սարքերի՝ վիսկոզիմետրի, տաքացուցիչի առկայությունը Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական ուսուցում 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանա տարբեր նմուշներում որոշել սպիտակուցային ազոտը, ոչ սպիտակուցային ազոտը և ընդհանուր ազոտը,

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. կարող է որոշել ընդհանուր ազոտը կոլորիմետրիկ մեթոդով ըստ Նեալերի.
- բ. կարող է որոշել ընդհանուր ազոտը Կելդալի մեթոդով.
- գ. կարող է որոշել սպիտակուցային ազոտը տարբեր նմուշներում Բարնշտեյնի մեթոդով.
- դ. կարող է որոշել ոչ սպիտակուցային ազոտը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքները կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է կարողանա որոշել ընդհանուր ազոտը կոլորիմետրիկ մեթոդով

ըստ Նեպերի, ընդհանուր ազոտը Կեյլդալի մեթոդով, սպիտակուցային ազոտը տարբեր նմուշներում Բարնշտեյնի մեթոդով, ինչպես նաև ոչ սպիտակուցային ազոտը: Ուսանողը պետք է կարողանա պատրաստել այն լուծույթները, որոնք անհրաժեշտ են փորձերի համար: Ուսանողը իր աշխատանքային տետրում պետք է ճիշտ ձևակերպի փորձերի նպատակը, ընթացքը և արդյունքները: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ՝որոշակի ոչ էական բացթողումներով, կատարի գործնական առաջադրանքները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԸ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է գործնական գիտելիքների ուսուցմամբ, ունենալ սպիտակուցային տարբեր լուծույթներ, բուսական չոր հումք: Անհրաժեշտ են պատրաստի ռեակտիվներ՝ Նեպերի ռեակտիվ, ինդիկատորային ռեակտիվ, 0,1ն ծծմբական թթու: Պետք է պատրաստի ունենալ կամ հավաքել անոնիակի թորման սարքը, Կեյլդալի կոլբան նմուշների այրման համար, տիտրելու համար համապատասխան փորձանոթներ: Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում, պահպանելով անվտանգության կանոնները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Գործնական ուսուցում 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Տիրապետի սպիտակուցների և ամինաթթուների անալիզի գունային ռեակցիաներին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա.կարող է բացատրել և կատարել տարբեր սպիտակուցների համար որակական որոշմամբ բիրուետային ռեակցիան, որը պայմանավորում է սպիտակուցի կազմի մեջ մտնող ամինաթթուների պեպտիդային կապերի (-CO-NH-) գունային ռեակցիան պղնձի սուլֆատի իոններով հիմնային միջավայրում, տալով կապտամանուշակագույն գունավորում բնական սպիտակուցի և կարմրամանուշակագույն գունավորում հիդրոլիզված սպիտակուցի՝ պեպտիդների համար.

բ. կարող է կատարել տարբեր սպիտակուցների համար որակական որոշմամբ նինհիդրինային ռեակցիան, որի դեպքում սպիտակուցները, պոլիպեպտիդները տալիս են կապույտ կամ մանուշակագույն, իսկ ազատ ամինաթթուները՝ վարդագույն գունավորում, ինչը պայմանավորված է ամինախմբով.

գ. կարող է կատարել տարբեր սպիտակուցների համար որակական որոշմամբ քսանտոպրոտեինային ռեակցիան, որը բացահայտում է սպիտակուցում ցիկլիկ ամինաթթուների՝ տրիպտոֆան, ֆենիլալանին և թիրոզին ամինաթթուների առկայությունը, որը պայմանավորված է ազոտական թթվով բենզոլային օղակի նիտրոածանցյալների առաջացմամբ՝ տալով դեղին-նարնջագույն գունավորում.

դ. կարող է կատարել սպիտակուցի (ձվի սպիտակուցի հայտնի 0,5, 1 և 1,5 %-անոց հայտնի և անհայտ լուծույթներ) քանակական որոշում բիրուետի մեթոդով, կիրառելով Ֆոտոէլեկտրոկոլորիմետր սարքը (ՖԷԿ):

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքները կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է կարողանա բացատրել և որոշել սպիտակուցների քանակը տարբեր լուծույթներում բիրուետի մեթոդով, տարբեր ամինաթթուների որակական և քանակական ռեակցիաները նինհիդրինի, քսանտոպրոտեինի միջոցով: Ուսանողը պետք է կարողանա պատրաստել այն լուծույթները, որոնք անհրաժեշտ են փորձերի համար: Ուսանողը իր աշխատանքային տետրում պետք է ճիշտ ձևակերպի փորձերի նպատակը, ընթացքը և արդյունքները: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ որոշակի ոչ էական բացթողումներով, կատարի գործնական առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԸ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է գործնական գիտելիքների ուսուցմամբ, ունենալ սպիտակուցային տարբեր լուծույթներ, ամինաթթուների ստանդարտ լուծույթներ: Պետք է Ֆոտոէլեկտրոկոլորիմետր սարքը (ՖԷԿ), ուսանողներին սովորեցնել սարքով կատարել չափումներ: Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական ուսուցում 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Տիրապետի ամինաթթուների բաժանմանը և քանակական որոշմանը թղթի քրոմատոգրաֆիկ մեթոդով:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. կարող է բացատրել խառնուրդում տարբեր ամինաթթուների բաժանման էությունը բաշխիչ թղթի քրոմատոգրաֆիկ մեթոդով.
- բ. կարող է տիրապետել թղթի քրոմատոգրաֆիկ մեթոդի տեխնիկային, շարժուն և անշարժ ֆազաների լուծույթների պատրաստմանը.
- գ. կարող է որոշել ամինաթթուները ստանդարտ խառնուրդի լուծույթում թղթի քրոմատոգրաֆիկ մեթոդով.
- դ. կարող է որոշել ամինաթթուները հիդրոլիզացված սպիտակուցի (ձվի սպիտակուցի լուծույթ) թղթի քրոմատոգրաֆիկ մեթոդով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքները կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է կարողանա բացատրել խառնուրդում տարբեր ամինաթթուների բաժանման էությունը բաշխիչ թղթի քրոմատոգրաֆիկ մեթոդով, կարողանա տիրապետել թղթի քրոմատոգրաֆիկ մեթոդի տեխնիկային, շարժուն և անշարժ ֆազաների լուծույթների պատրաստմանը, որոշել ամինաթթուները ստանդարտ խառնուրդի լուծույթում թղթի քրոմատոգրաֆիկ մեթոդով, ինչպես նաև ամինաթթուները հիդրոլիզացված սպիտակուցի (ձվի սպիտակուցի լուծույթ) թղթի քրոմատոգրաֆիկ մեթոդով: Ուսանողը պետք է կարողանա պատրաստել այն լուծույթները, որոնք անհրաժեշտ են փորձերի

համար, պատրաստի թղթի քրոմատոգրամաները: Ուսանողը իր աշխատանքային տետրում պետք է ճիշտ ձևակերպի փորձերի նպատակը, ընթացքը և արդյունքները, պահպանի ամինաթթուներով թղթի քրոմատոգրամաները, կատարի դրանցով քանակական հաշվարկներ: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ՝որոշակի ոչ էական բացթողումներով, կատարի գործնական առաջադրանքները, ներկայացնի իր թղթի քրոմատոգրամաները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԸ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է գործնական գիտելիքների ուսուցմամբ, ունենալ անհրաժեշտ քրոմատոգրաֆիկ թուղթ, հատուկ կամերաներ, քարշիչ պահարան, չորացնող տաքացնող կամերա, սպեկտրոֆոտոմետր, ֆոտոկոլորիմետր, սպիտակուցային տարբեր լուծույթներ, ամինաթթուների ստանդարտ լուծույթներ: Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական ուսուցում 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Տիրապետի բարդ սպիտակուցների՝ նուկլեո-, գլիկո-, ֆոսֆոպրոտեիդների որոշման մեթոդներին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. կարող է բացատրել բարդ սպիտակուցների կառուցվածքը, որոնք կազմված են սպիտակուցային մասից և ոչ սպիտակուցային՝ պրոստետիկ խմբից, և համապատասխան գունային ռեակցիաներով կարող է բացահայտել բարդ սպիտակուցների կառուցվածքային կոմպոնենտները.

բ. կարող է որոշել շաքարասնկերի (խմորիչ, դրոժներ) պատրաստի հիդրոլիզատում նուկլեոպրոտեիդների (նուկլեինաթթուներ պարունակող սպիտակուցների) կոմպոնենտները որակական անալիզի մեթոդով՝ բիրուետի ռեակցիան սպիտակուցների առկայության համար, նուկլեինաթթուների՝ ազոտային հիմքի, պենտոզային խմբի և ֆոսֆորական թթվի համար հանապատասխան ռեակցիաները.

գ. կարող է որոշել ձվի, թքի սպիտակուցում, գլիկոպրոտեիդների (ածխաջրեր պարունակող սպիտակուցների) կոմպոնենտները որակական անալիզի մեթոդով՝ բիրուետի ռեակցիան սպիտակուցների առկայության համար և ածխաջրի հանապատասխան ռեակցիաները.

դ. կարող է որոշել կաթի սպիտակուցում ֆոսֆոպրոտեիդների (ֆոսֆորական թթու պարունակող սպիտակուցներ) կոմպոնենտները որակական անալիզի մեթոդով՝ բիրուետի ռեակցիան սպիտակուցների առկայության համար և ֆոսֆորական թթվի հանապատասխան ռեակցիաները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքները կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է կարողանա բացատրել և որոշել բարդ սպիտակուցների՝ նուկլեոպրոտեիդների, գլիկոպրոտեիդների, ֆոսֆոպրոտեիդների քանակը տարբեր լուծույթներում բիրուետի մեթոդով, ինչպես նաև որոշի ազոտական հիմքի, ածխաջրի, ֆոսֆորական թթվի

համապատասխան ռեակցիաները: Ուսանողը պետք է կարողանա պատրաստել այն լուծույթները, որոնք անհրաժեշտ են փորձերի համար: Ուսանողը իր աշխատանքային տետրում պետք է ճիշտ ձևակերպի փորձերի նպատակը, ընթացքը և արդյունքները: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ՝որոշակի ոչ էական բացթողումներով, կատարի գործնական առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԸ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է գործնական գիտելիքների ուսուցմամբ, կրկնելով և վերհիշեցնելով նախորդ արդյունքներում սովորածը: Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում, գործնական և տեսական գիտելիքների կրկնողությամբ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Գործնական ուսուցում 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՖԵՐՄԵՆՏՆԵՐ, ԴՐԱՆՑ ԱՆՋԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ՖԵՐՄԵՆՏՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը՝ LՀՁԱ 03-10-24

Մոդուլի տևողությունը՝ 18 ժամ

Տեսական ուսուցում 6 ժամ

Գործնական ուսուցում 12 ժամ

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ստեղծել գիտելիքների բազա ֆերմենտների անջատման հիմնական մեթոդների, ֆերմենտների ակտիվության որոշման եղանակների վերաբերյալ, որոնք այժմ լայն կիրառություն ունեն խմորվող և կենսաքիմիական արտադրություններում, անջատվելով մանրէներից, բույսերից և կենդանիներից:

Մուտքային պահանջներ՝

Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

- 1. ներկայացնի և տիրապետի ֆերմենտ սուբստրատ ազդման մեխանիզմի սպեցիֆիկությունը.**
- 2. ներկայացնի ֆերմենտային ռեակցիայի արագության վրա ազդող գործոնները:**

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնի և տիրապետի ֆերմենտ սուբստրատ ազդման մեխանիզմի սպեցիֆիկությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. կարող է որոշել տարբեր ֆերմենտների (պատրաստի բյուրեղային՝ ամիլազա, պրոտեազա, լիպազա) սուբստրատային սպեցիֆիկությունը.**
- բ. կարող է փորձարկել ամիլազայի ակտիվությունը օսլայի, դեքստրինների վրա կիրառելով համապատասխան որոշման եղանակները.**

գ. կարող է փորձարկել պրոտեազայի ակտիվությունը կազեինի, ժելատինի վրա կիրառելով համապատասխան որոշման եղանակները.

դ. կարող է փորձարկել լիպազայի ակտիվությունը տարբեր ճարպերի, յուղերի, բուսական ձեթերի վրա կիրառելով համապատասխան որոշման եղանակները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքները կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է կարողանա բացատրել և որոշել տարբեր ֆերմենտների (պատրաստի բյուրեղային՝ ամիլազա, պրոտեազա, լիպազա) սուբստրատային սպեցիֆիկությունը, փորձարկելով ամիլազայի ակտիվությունը օսլայի, դեքստրինների վրա, պրոտեազայի ակտիվությունը կազեինի, ժելատինի վրա, լիպազայի ակտիվությունը տարբեր ճարպերի, յուղերի, բուսական ձեթերի վրա: Ուսանողը պետք է կարողանա պատրաստել բուֆերային լուծույթներ տարբեր pH-ներով՝ ֆերմենտների որպես սպիտակուցային բնույթի կենսակատալիզատորների համար: Ուսանողը իր աշխատանքային տետրում պետք է ճիշտ ձևակերպի փորձի արդյունքները: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ՝ որոշակի ոչ էական բացթողումներով, մասնակցի գործնական առաջադրանքների կատարմանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական և գործնական գիտելիքների ուսուցմամբ, ունենալ պատրաստի բյուրեղային ֆերմենտներ՝ ամիլազա, պրոտեազա, լիպազա: Անհրաժեշտ է ունենալ կենսակատալիզատորներին վերաբերվող դիդակտիկ նյութ, պլակատներ, համակարգիչային տեսանյութեր պարզաբանելու և ներկայացնելու ֆերմենտների կառուցվածքը՝ սպիտակուցային (ապոֆերմենտ) և ոչ սպիտակուցային (կոֆերմենտ) մասերը, ֆերմենտի ակտիվ կենտրոնի և կատալիտիկ ակտիվության վրա ազդող գործոնները: Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում, հիմնավորելով տեսական գիտելիքներով:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական ուսուցում 6 ժամ

ԱՐԴՑՈՒՆՔ 2. Ներկայացնի ֆերմենտային ռեակցիայի արագության վրա ազդող գործոնները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. կարող է փորձարկել ամիլազայի ակտիվության վրա ջերմաստիճանի ազդեցությունը (30, 40, 50, 60, 70 °C պայմաններում) կիրառելով համապատասխան որոշման եղանակները.

բ. կարող է փորձարկել պրոտեազայի ակտիվության վրա ջերմաստիճանի ազդեցությունը (30, 40, 50 60, 70 °C պայմաններում) կիրառելով համապատասխան որոշման եղանակները.

գ. կարող է փորձարկել լիպազայի ակտիվության վրա ջերմաստիճանի ազդեցությունը (30, 40, 50 60, 70°C պայմաններում) կիրառելով համապատասխան որոշման եղանակները.

դ. կարող է փորձարկել ամիլազայի ակտիվության վրա տարբեր pH-ի ազդեցությունը (pH 3-5; pH 6-7; pH 8-10) կիրառելով համապատասխան որոշման եղանակները.

ե. կարող է փորձարկել պրոտեազայի ակտիվության վրա տարբեր pH-ի ազդեցությունը (pH 3-5; pH 6-7; pH 8-10) կիրառելով համապատասխան որոշման եղանակները.

զ. կարող է փորձարկել լիպազայի ակտիվության վրա տարբեր pH-ի ազդեցությունը (pH 3-5; pH 6-7; pH 8-10) կիրառելով համապատասխան որոշման եղանակները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքները կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է կարողանա իրականացնել տարբեր ֆերմենտների (պատրաստի բյուրեղային՝ ամիլազա, պրոտեազա, լիպազա) ակտիվությունը ջերմաստիճանի (30, 40, 50, 60, 70 °C պայմաններում), տարբեր pH-ի պայմաններում (pH 3-5; pH 6-7; pH 8-10) Ուսանողը պետք է կարողանա պատրաստել բուֆերային լուծույթներ տարբեր pH-ներով՝ ֆերմենտների որպես սպիտակուցային բնույթի կենսակատալիզատորների համար: Ուսանողը իր աշխատանքային տետրում պետք է ճիշտ ձևակերպի փորձի արդյունքները: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ՝որոշակի ոչ էական բացթողումներով, մասնակցի գործնական առաջադրանքների կատարմանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական և գործնական գիտելիքների ուսուցմամբ, պետք է ունենալ պատրաստի բյուրեղային ֆերմենտներ՝ ամիլազա, պրոտեազա, լիպազա, պատրաստել դրանց բուֆերային լուծույթները: Անհրաժեշտ են ջրային բաղնիքներ, ֆոտոկլորիմետր կամ սպեկտրոֆոտոմետր: Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 4 ժամ

Գործնական ուսուցում 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԼԻՊԻԴՆԵՐ, ԴՐԱՆՑ ՈՐՈՇՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը՝ ԼՀՉԱ 03-10-25

Մոդուլի տևողությունը՝ 18 ժամ

Տեսական ուսուցում 6 ժամ

Գործնական ուսուցում 12 ժամ

Մոդուլի նպատակը՝

Ուսանողի մոտ ստեղծել գիտելիքների բազա լիպիդների անալիզի մեթոդների վերաբերյալ, որոնք վերաբերվում են պարզ և բարդ լիպիդների կառուցվածքի և հատկությունների ուսումնասիրմանը, ճարպերի անջատմանը, ներառելով բնորոշ ռեակցիաներ պարզ լիպիդների՝ կազմված գլիցերինից և ճարպաթթուներից, ինչպես նաև բարդ լիպիդների՝ կազմված գլիցերինից, ճարպաթթուներից, ֆոսֆորական թթվից և ազոտական հիմքից, ինչպես նաև ստերինների և ստերիդների համար՝ խոլեստերինի համար:

Մուտքային պահանջներ՝

Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն **Ուսումնասրության արդյունքները.**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

- 1. տիրապետի բուսական հումքից՝ հացազգիներ, կենդանական հումքից՝ հավի ձվի դեղնուցից ճարպերի անջատման մեթոդներին.**
- 2. տիրապետի լիպիդների բնորոշ հատկանշական ռեակցիաներին.**
- 3. որակական ռեակցիաներով որոշել գլիցերինը, ճարպաթթուները, լեցիտինը:**

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տիրապետի բուսական հումքից՝ հացազգիներ, կենդանական հումքից՝ հավի ձվի դեղնուցից ճարպերի անջատման մեթոդներին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. Ճիշտ է բացատրում ճարպի անջատումը տարբեր նմուշներից, որը հիմնված է ճարպի լուծմամբ օրգանական լուծիչի մեջ (օրինակ էթերի), հետագայում լուծիչի հեռացմամբ և ստացված ճարպային մասսայի չորացմամբ և կշռմամբ.

բ. կարող է անջատել (էքստրակտել) տարբեր բուսական և կենդանական հումքից ընդհանուր ճարպը և որոշել դրա քանակը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքները կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է կարողանա օգտվել բաշխիչ ձագարից, օրգանական լուծիչներով ճարպի անջատման համար, իրականացնի կշռային մեթոդները: Ուսանողը իր աշխատանքային տետրում պետք է ճիշտ ձևակերպի փորձի արդյունքները: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ՝որոշակի ոչ էական բացթողումներով, մասնակցի գործնական առաջադրանքների կատարմանը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական և գործնական գիտելիքների ուսուցմամբ: Անհրաժեշտ է ունենալ բաժանիչ ձագարներ, օրգանական լուծիչներ, անալիտիկ կշեռք, քարշիչ պահարան: Անհրաժեշտ նյութեր՝ հումք, հացազգիների կուլտուրաներ, հավի ձվի դեղնուց ճարպերի անջատման համար: Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում, պահպանելով անվտանգության կանոնները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական ուսուցում 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Տիրապետի լիպիդների բնորոշ հատկանշական ռեակցիաներին,

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. կարող է բացատրել կենդանական ճարպում հազեցած ճարպաթթուների և բուսական ձեթերում չհազ եցած ճարպաթթուների դերը.

բ. կարող է բացատրել և փորձով ցուցադրել տարբեր օրգանական լուծիչներում (բենզին, բենզոլ, քլորոֆորմ, դիէթիլ էթեր և այլն) տարբեր ճարպերի լուծելիությունը և անլուծելիությունը ջրում, սպիրտում, ացետոնում.

գ. կարող է բացատրել և փորձով ցուցադրել ճարպերի էմուլացումը, կիրառելով տարբեր էմուլգատորներ՝ սպիտակուցներ, հիմքեր, սոդա, օճառ և այլն.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքները կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է կարողանա բացատրել կենդանական ճարպում հազեցած ճարպաթթուների և բուսական ձեթերում չհազեցած ճարպաթթուների դերը, ցուցադրել տարբեր օրգանական լուծիչներում (բենզին, բենզոլ, քլորոֆորմ, դիէթիլ էթեր և այլն) տարբեր ճարպերի լուծելիությունը և անլուծելիությունը ջրում, սպիրտում, ացետոնում, փորձով ցուցադրել ճարպերի էմուլգացումը, կիրառելով տարբեր էմուլգատորներ՝ սպիտակուցներ, հիմքեր, սոդա, օճառ Ուսանողը պետք է կարողանա պատրաստել այն լուծույթները, որոնք անհրաժեշտ են փորձերի համար: Ուսանողը իր աշխատանքային տետրում պետք է ճիշտ ձևակերպի փորձերի նպատակը, ընթացքը և արդյունքները: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ՝որոշակի ոչ էական բացթողումներով, կատարի գործնական առաջադրանքները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է գործնական գիտելիքների ուսուցմամբ, ունենալ անհրաժեշտ օրգանական լուծիչներ, բաժանիր ձագարներ, հատուկ կամերաներ, քարշիչ պահարան: Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում, պահպանելով անվտանգության կանոնները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական ուսուցում 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Որոշի որակական ռեակցիաներով գլիցերինը, ճարպաթթուները, լեցիտինը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. կարող է բացատրել պարզ ճարպերի հիդրոլիզը գլիցերինի և ճարպաթթուների և փորձով ցուցադրել ակրոլեինի ռեակցիան գլիցերինի առկայության համար տարբեր բուսական ձեթերի նմուշներում, համեմատելով գլիցերին չպարունակող ճարպային նյութ՝ մումի հետ,

բ. կարող է որոշել ճարպաթթուները թղթի քրոմատոգրաֆիկ մեթոդով,

գ. կարող է ձվի դեղնուցից անջատել լեցիտինը և դնել լեցիտինի հատկանշական ռեակցիաներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքները կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է կարողանա բացատրել պարզ ճարպերի հիդրոլիզը գլիցերինի և ճարպաթթուների և փորձով ցուցադրել ակրոլեինի ռեակցիան գլիցերինի առկայության համար տարբեր բուսական ձեթերի նմուշներում, համեմատելով գլիցերին չպարունակող ճարպային նյութ՝ մումի հետ, որոշել ճարպաթթուները թղթի քրոմատոգրաֆիկ մեթոդով, ձվի դեղնուցից անջատել լեցիտինը և դնել լեցիտինի հատկանշական ռեակցիաները: Կարողանա տիրապետել թղթի քրոմատոգրաֆիկ մեթոդի տեխնիկային ճարպաթթուների բաժանման համար: Ուսանողը պետք է կարողանա պատրաստել այն լուծույթները,

որոնք անհրաժեշտ են փորձերի համար, պատրաստի թղթի քրոմատոգրամաները: Ուսանողը իր աշխատանքային տետրում պետք է ճիշտ ձևակերպի փորձերի նպատակը, ընթացքը և արդյունքները, պահպանի ճարպաթղթերով թղթի քրոմատոգրամաները: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ՝որոշակի ոչ էական բացթողումներով, կատարի գործնական առաջադրանքները, ներկայացնի իր թղթի քրոմատոգրամաները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է գործնական գիտելիքների ուսուցմամբ, ունենալ անհրաժեշտ քրոմատոգրաֆիկ թուղթ, հատուկ կամերաներ, քարշիչ պահարան, չորացնող տաքացնող կամերա: Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում, պահպանելով անվտանգության կանոնները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական ուսուցում 4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԻՏԱՄԻՆՆԵՐ, ԴԻԱՆՑ ՈՐՈՇՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը՝ ԼՀՉԱ 03-10-26

Մոդուլի տևողությունը՝ 18 ժամ

Տեսական ուսուցում 6 ժամ

Գործնական ուսուցում 12 ժամ

Մոդուլի նպատակը՝

Ուսանողի մոտ ստեղծել գիտելիքներ վիտամինների՝ ջրալուծ և ճարպալուծ, վերաբերյալ, դրանց հայտնաբերման և որակական բնորոշ ռեակցիաներով:

Մուտքային պահանջներ՝

Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. ներկայացնի ջրալուծ վիտամինները՝ կարևորելով առանձին ներկայացուցիչները, թիամին (վիտամին B1), ռիբոֆլավին (վիտամին B2), ցիանկոբալամին (վիտամին B12), պիրիդոքսին (վիտամին B6).
2. կարողանա առանձնացնել ճարպալուծ վիտամինները՝ կարևորելով առանձին ներկայացուցիչները, ռետինոլ (վիտամին A), խոլեկալցիֆերոլ (վիտամին D), տոկոֆերոլ (վիտամին E).
3. կարողանա որոշել բուսական նմուշներում ասկորբինաթթուն՝ վիտամին C-ն, որակական և քանակական եղանակներով:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնի ջրալուծ վիտամինները՝ կարևորելով առանձին ներկայացուցիչները, թիամին (վիտամին B1), ռիբոֆլավին (վիտամին B2), ցիանկոբալամին (վիտամին B12), պիրիդոքսին (վիտամին B6):

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. Ճիշտ է բացատրում ջրալուծ վիտամինները.
- բ. կարող է որակական ռեակցիաներով որոշել ջրալուծ վիտամինները՝ առանձին ներկայացուցիչները.
- գ. թիամին (վիտամին B1) հիմնային միջավայրում դիագոռեակտիվով գունավորում.
- դ. ռիբոֆլավին (վիտամին B2) մետաղական ցինկի և աղաթթվի հետ ռեակցիայում վիտամինի վերականգնում և գունային ռեակցիա.
- ե. ցիանկոբալամին (վիտամին B12) ռեակցիա հիմնված կոբալտի և թիոմիզաթթվի վրա գունավորմամբ.
- զ. պիրիդոքսին (վիտամին B6) վիտամինի և երկաթի քլորիդի փոխազդեցության ռեակցիա գունավորմամբ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքները կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է կարողանա բացատրել ջրալուծ վիտամինների առանձին ներկայացուցիչները՝ թիամին (վիտամին B1), ռիբոֆլավին (վիտամին B2), ցիանկոբալամին (վիտամին B12), պիրիդոքսին (վիտամին B6) և իրականացնել դրանց բնորոշ գունային ռեակցիաները: Ուսանողը իր աշխատանքային տետրում պետք է ճիշտ ձևակերպի փորձի արդյունքները: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ՝որոշակի ոչ էական բացթողումներով, մասնակցի գործնական առաջադրանքների կատարմանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական և գործնական գիտելիքների ուսուցմամբ: Անհրաժեշտ է ունենալ պատրաստի բյուրեղային վիտամիններ կամ դրանց լուծույթները, անհրաժեշտ ռեակտիվները: Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում 2 ժամ
- Գործնական ուսուցում 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ներկայացնի ճարպալուծ վիտամինները՝ կարևորելով առանձին ներկայացուցիչները, ռետինոլ (վիտամին A), խոլեկալցիֆերոլ (վիտամին D), տոկոֆերոլ (վիտամին E),

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. Ճիշտ է բացատրում ճարպալուծ վիտամինները.
- բ. կարող է որակական ռեակցիաներով որոշել ճարպալուծ վիտամինները՝ առանձին ներկայացուցիչները.
- գ.ռետինոլ (վիտամին A ձկան յուղում)՝ քլորոֆորմի և ծծմբական թթվի ռեակցիա գունավորմամբ.
- դ. խոլեկալցիֆերոլ (վիտամին D ձկան յուղում)՝ անիլինի և աղաթթվի ռեակցիա գունավորմամբ.
- ե. տոկոֆերոլ (վիտամին E) ազոտական թթվով ռեակցիա գունավորմամբ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքները կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է կարողանա բացատրել ճարպալուծ վիտամինների առանձին ներկայացուցիչները՝ ռետինոլ (վիտամին A ձկան յուղում), խոլակալցիֆերոլ (վիտամին D ձկան յուղում), տոկոֆերոլ (վիտամին E) և իրականացնել դրանց բնորոշ գունային ռեակցիաները: Ուսանողը իր աշխատանքային տեսքում պետք է ճիշտ ձևակերպի փորձի արդյունքները: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ՝ որոշակի ոչ էական բացթողումներով, մասնակցի գործնական առաջադրանքների կատարմանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական և գործնական գիտելիքների ուսուցմամբ: Անհրաժեշտ է ունենալ պատրաստի վիտամինների լուծույթները, անհրաժեշտ ռեակտիվները: Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական ուսուցում 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանա որոշել բուսական նմուշներում ասկորբինաթթուն՝ վիտամին C որակական և քանակական եղանակներով

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. կարողանա որակական ռեակցիաներով որոշել ասկորբինաթթուն՝ վիտամին C, բուսական տարբեր հումքերում, օտագործելով երկաթե քլորիդը և կալիումի ֆերոցիանիդը, որոնք վիտամին C –ի հետ տալիս են մուգ կապույտ գունավորում (բեռլինյան լազուր)։
- բ. կարողանա կատարել բուսական տարբեր հումքերում վիտամին C –ի քանակական որոշում՝ տիտրելով 2,6- դիքլորֆենոլինդոֆենոլով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքները կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է կարողանա որակական ռեակցիաներով որոշել ասկորբինաթթուն՝ վիտամին C, բուսական տարբեր հումքերում, ինչպես նաև կարողանա կատարել բուսական տարբեր հումքերում վիտամին C –ի քանակական որոշում՝ տիտրելով 2,6- դիքլորֆենոլինդոֆենոլով: Ուսանողը իր աշխատանքային տեսքում պետք է ճիշտ ձևակերպի փորձի արդյունքները: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ՝ որոշակի ոչ էական բացթողումներով, մասնակցի գործնական առաջադրանքների կատարմանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական և գործնական գիտելիքների ուսուցմամբ: Անհրաժեշտ է ունենալ բյուրեղային վիտամին C, պատրաստել լուծույթներ, անհրաժեշտ ռեակտիվները: Ուսուցումը պետք է տանել լաբորատոր պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական ուսուցում 4 ժամ